**ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 280-Ա**

**9 սեպտեմբերի, 2020 թվական**

**ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 4-ի N 1573-Ա, N 1591-Ա, N 1593-Ա, N 1595-Ա և N 1597-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի սեպտեմբերի 6-8-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

   1) Ա/Ձ «Կարեն Ավետիսյան», Արմավիրի մարզ, գ.Մյասնիկյան (ՀՎՀՀ 49622955).

   2) Ա/Ձ «Արիս Քարամյան», Արարատի մարզ, ք.Արտաշատ,Մարքսի 19բ ( ՀՎՀՀ 47833742).

   3) «Ինիռինգ» ՍՊԸ, Գեղարքունիքի մարզ, գ. Չկալովկա (ՀՎՀՀ 08621092).

   4) «Օազիս Ֆուդ» ՍՊԸ, Կոտայքի մարզ, գ. Պտղնի 21 փ.,1/2 (ՀՎՀՀ 03544466):

2. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 09/09/20 18:01:22 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

**Տ. ԱՎԻՆՅԱՆ**